[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
15	Մայիս	2019 թ.		Բ	9153261752
[4] Մատուցման ամսաթիվ					
13	Մայիս	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	8	3	0	7	2		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	«ԴԱԲԼ ԷՅՋ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները	Արտոշինբանկ	N 2471202323320000								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 48									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	N 900011000834							
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Հարկ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թիվ 69101018 քրեական գործով դատահաշվապահականփորձաքննություն «Էկոսոցիում» ՀԿ-ում 2012-2013թթ	հատ	1	280000		280000
Ընդամենը						280000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ STEPANYAN VAHAGN 2111860522

(ծառայություն, անուն, ազգանուն)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ծառայություն, անուն, ազգանուն)

15/05/2019 13:51:33

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին

07-ը սեպտեմբերի, 2018թ. *ք.Երևան*

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռհանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Ռ.Հ.Վարդանյանս, վերանայելով վարույթիս թիվ 69101018 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2015 թվականի սեպտեմբերի 15-ին խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակից ՀՀ գլխավոր դատախազություն տեղեկություններ են ստացվել, որ 2012 թվականի սեպտեմբերի 2-ին «Մարտունու ուսանողական խորհուրդ» հասարակական կազմակերպության անունից Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության գրասենյակ է ներկայացվել «Հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ ապագայի երաշխիք» անվամբ ծրագիր, որը հաստատվել է և ծրագրի իրականացման նպատակով «Մարտունու ուսանողական խորհուրդ» ՀԿ-ի է փոխանցվել շուրջ 120.000 եվրո գումար: Ծրագրի իրականացման ստուգման ժամանակ «Մարտունու ուսանողական խորհուրդ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչներին չեն կարողացել ամբողջությամբ հիմնավորել ծրագրի իրականացման համար ներկայացված ֆինանսական ծախսերը:

Դեպքի առթիվ 2015 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11821515 քրեական գործը: Նույն օրը որոշում է կայացվել Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությանը որպես տուժող ճանաչելու մասին:

2016 թվականի փետրվարի 22-ից քրեական գործի նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

Քրեական գործի նախաքննության ընթացքում 2018 թվականի փետրվարի 26-ին որոշում է կայացվել ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության կողմից 2010-2016 թվականների ընթացքում «Մարտունու ուսանողական խորհուրդ», «Նորագույն տեխնոլոգիաներ հանուն մարդկային զարգացման», «Ինովացիոն հետազոտությունների և զարգացման կենտրոն», «Տարածաշրջանային վերլուծությունների կենտրոն», «Համագործակցության ասոցիացիա», «Հազարամյակ», «Տարածաշրջանային նախաձեռնությունների կենտրոն», «Ինտելեկտ կայուն զարգացման համար», «Սոցիալ-տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների կենտրոն», «Տեղեկատվության և իրավունքի ինստիտուտ», «Սյունիքի երիտասարդական կենտրոն», Երիտասարդական գիտա-մշակութային», «Սոսե» հասարակական կազմակերպություններին և «Ներդրումների պաշտպանության հիմնադրամ» հիմնադրամին հատկացված դրամաշնորհների առանձնապես խոշոր չափերի գումարների հափշտակության, հափշտակությանն օժանդակելու, ինչպես նաև մի խումբ անձանց կողմից փաստաթղթի կեղծիք կատարելու համար որպես մեղադրյալներ ներգրավված Մարինե Պապյանի, Տիգրան Սուքիասյանի, Գարիկ Չիլինգարյանի, Ռուբինա Տեր-Մարտիրոսյանի, Գևորգ Ղազարյանի, Արմեն Բարեղամյանի, Դինա Մանուկյանի, Սերգեյ Բալասանյանի, Կարեն Ստեփանյանի, Ալեքսանդր Պողոսյանի, Անահիտ Ավագյանի, Արման Մկրտչյանի, Արմեն Միքայելյանի, Նելլի Սեդրակյանի նկատմամբ գործն անջատել և անջատված մասի նախաքննությունը

շարունակել թիվ 11821515 համարի տակ, իսկ հիմնական գործի նախաքննությունը շարունակել թիվ 69101018 համարով:

Նախաքննությամբ պարզվել է, որ Գեղամ Պետրոսյանը, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, խարդախությամբ հափշտակել է ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության կողմից «Տեղեկատվության և իրավունքի ինստիտուտ» ՀԿ-ին 2013-2014թթ. ընթացքում «Կանանց բիզնես ակումբների հիմնադրում և կանանց ձեռնարկությունների զարգացման խթանում» դրամաշնորհային ծրագրով հատկացված առանձնապես խոշոր չափերի՝ 142.432 եվրոյին համարժեք 77.513.640 ՀՀ դրամը, ինչպես նաև ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության կողմից «Բիոէթիկա» ՀԿ-ին նույն ժամանակահատվածում «Իջեվանի քաղաքապետարանի, առողջապահական հաստատությունների, ՀԿ-ների և քաղաքացիների միջև արդյունավետ համագործակցության ապահովումը՝ համայնքի բնակչության առողջապահական և սոցիալական խնդիրների լուծման համար» դրամաշնորհային ծրագրով հատկացված առանձնապես խոշոր չափերի 144.993,47 եվրոյին համարժեք 83.138.408 ՀՀ դրամը:

Բացի այդ, քրեական գործի նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Գեղամ Պետրոսյանը, ուրիշի գույքը խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ, 2011 թվականին մշակել և «Էկոսոցիում» հասարակական կազմակերպությունների անունից ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության գրասենյակ է ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններով ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող «Համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նպատակով Աչաջրի տեղական ինքնակառավարման կարողությունների զարգացում» անվանումով դրամաշնորհային ծրագիր: Ծրագրային հայտը պատվիրակության հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել և 2011 թվականին դեկտեմբերի 20-ին կնքվել է դրամաշնորհային ծրագիր իրականացնելու մասին պայմանագիր:

Ծրագիրն իրականացնելու համար պայմանագրով նախատեսված գումարներից 2012-2013թթ. ընթացքում ՀՀ-ում ԵՄ պատվիրակության կողմից «Էկոսոցիում» ՀԿ-ի հաշվարկային հաշվեհամարին փոխանցվել է 99.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Այնուհետև, 2012 թվականի փետրվարի 10-ին ՀԿ-ի հաշվարկային հաշվեհամարին փոխանցված 79.200 եվրոյից շուրջ 50.000 եվրոյի համարժեք ՀՀ դրամը ծրագրի հաշվապահ Անժելա Ավետիսյանը Գեղամ Պետրոսյանի հանձնարարությամբ կանխիկացրել է ՀԿ-ի հաշվարկային հաշվեհամարից և առձեռն տվել Գեղամ Պետրոսյանին, որը վերջինս հափշտակել է:

Իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու և արդեն իսկ հափշտակված գումարը քողարկելու նպատակով ծրագրի հաշվապահ Անժելա Ավետիսյանը Գեղամ Պետրոսյանի հանձնարարությամբ կազմել է աշխատանքային, ծառայությունների մատուցման կեղծ պայմանագրեր, դրամարկղային ելքի կեղծ օրդերներ, գործուղումների կեղծ թերթիկներ, սեմինարների վարման կեղծ ցուցակներ, որոնց հիման վրա 2012-2013թթ. ընթացքում Գեղամ Պետրոսյանը հափշտակել է ծրագրի իրականացման համար հատկացված գումարների մնացած մասը:

Արդյունքում Գեղամ Պետրոսյանը հափշտակել է «Համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նպատակով Աչաջրի տեղական ինքնակառավարման կարողությունների զարգացում» անվանումով դրամաշնորհային ծրագրով ՀՀ-ում ԵՄ պատվրակության կողմից «Էկոսոցիում» ՀԿ-ի փոխանցված ընդհանուր 99.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամը:

Նկատի ունենալով, որ «Էկոսոցիում» հասարակական կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ քննությանը հետաքրքրող մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատահաշվապահական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Դաբլ Էյջ Քոնսալթինգ» ՍՊ ընկերությանը:

2. <u>*Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.*</u>

ա/ Որքան է կազմել «Համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նպատակով Աչաջրի տեղական ինքնակառավարման կարողությունների զարգացում» անվանումով դրամաշնորհային ծրագրի իրականացման համար նախատեսված գումարը՝ ըստ ծրագրի բյուջեի:

բ/ Ինչ աշխատանքներ ու ծախսեր են նախատեսվել ծրագրի բյուջեով՝ առանձին-առանձին, որքան է կազմել յուրաքանչյուր աշխատանքի և ձեռք բերվող գույքի, նյութերի և այլն արժեքը՝ առանձին-առանձին, ճիշտ են հաշվարկվել արդյոք դրանց ծավալներն ու արժեքները: Ծրագրի ընթացքում գույք ձեռք բերելու գործընթացում պահպանվել են արդյոք օրենսդրության պահանջները, թե՝ ոչ, եթե՝ ոչ, կոնկրետ ինչ խախտումներ են թույլ տրվել:

գ/ Համապատասխանում են արդյոք ծրագրի իրականացման ընթացքում դրամաշնորհառու կազմակերպության կողմից ներկայացված միջանկյալ և վերջնական ֆինանսական հաշվետվություններով արտացոլված աշխատանքների ու կատարված ծախսերի ծավալները՝ ծրագրի բյուջեով նախատեսված աշխատանքներին ու ծախսերին, թե՝ ոչ:

դ/ Արդյոք Եվրոպական Միության կողմից դրամաշնորհառու կազմակերպությանը ծրագրի իրականացման ընթացքում հավելյալ կամ պակաս գումարներ վճարվել է, թե՝ ոչ, եթե՝ այո, որքան է կազմել տարբերությունները, կոնկրետ ինչ աշխատանքների և կատարված ծախսերի համար, ինչով է դա պայմանավորված:

ե/ Ծրագրի բյուջեում նախատեսված աշխատանքների և նյութերի ձեռք բերման համար նախատեսված ծախսերը ճշգրիտ նշելու պայմաններում որքան կարող էր իրականում կազմել ծրագրի բյուջեն, որքան է կազմում տարբերությունն արդեն իսկ կատարված աշխատանքների և ծախսերի միջև, արդյոք դրա հետևանքով վնաս է պատճառվել է, թե՝ ոչ, եթե՝ այո, ապա ում:

զ/ Խախտումների հետևանքով Եվրոպական Միությանը, ՀՀ-ին վնաս պատճառվել է, թե՝ ոչ, եթե այո, ապա՝ որքան է կազմում պատճառված վնասը:

է/ Որքան է կազմում «Համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նպատակով Աչաջրի տեղական ինքնակառավարման կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում աշխատանքներ իրականացրած յուրաքանչյուր աշխատակցի փաստացի ստացած վարձատրության չափը՝ ներառյալ գործուղումների և այլ ծախսերի համար նախատեսված գումարները (հաշվարկը ներկայացնել անվանական):

ը/ Թիվ DCI-NSAPVD/2011/269-089 պայմանագրերով դրամաշնորհառու կազմակերպության կողմից պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարվել են, թե՝ ոչ, եթե՝ ոչ, ապա դրա արդյունքում Եվրոպական Միությանը, Հայաստանի Հանրապետությանը վնաս պատճառվել է, թե՝ ոչ, եթե՝ այո, ապա՝ որքան է կազմում պատճառված վնասը:

թ/ Որքան է կազմել միջանկյալ և վերջնական ֆինանսական հաշվետվություններով ցույց տրված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների և չվճարված գումարների տարբերությունը, ինչով է դա պայմանավորված:
ժ/ Ծրագրի իրականացման վերաբերյալ կատարված աուդիտի ընթացքում պահպանվել են արդյոք օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջները, ձեռնարկվել են արդյոք համապատասխան անհրաժեշտ ողջ գործողությունները՝ խախտումներ հայտնաբերելու նպատակով, թե՝ ոչ, եթե՝ ոչ, ապա ինչպիս խախտումներ են թույլ տրվել աուդիտն իրականացնող ընկերության կողմից:
ի/ Աուդիտ իրականացրած ընկերության կողմից կատարված ստուգումների արդյունքում ձեռք բերված հաշվապահական և այլ փաստաթղթերը որքանով են հիմք հանդիսացել ծախսերի հաշվարկներ կատարելու համար, արդյոք հաշվարկները կատարվել են ամբողջությամբ և ճշգրիտ, թե՝ ոչ:
լ/ Ծրագրի իրականացման ժամանակահատվածում «Էկոսոցիում» հասարակական կազմակերպության հետ պայմանագրային փոխհարաբերություններում գտնված մյուս սուբյեկտների կողմից կատարվել են արդյոք հարկային պարտավորությունները, թե՝ ոչ, եթե՝ ոչ, ապա ինչ խախտումներ են թույլ տրվել, դրա հետևանքով պետությանը վնաս պատճառվել է, թե՝ ոչ:

3. Փորձագետին իրավունք վերապահել նաև պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետին տրամադրել սույն որոշումը՝ 4 թերթից, «Էկոսոցիում» ՀԿ-ի հաշվապահական հաշվառման փաստաթղթերը: Քրեական գործի նյութերն անհրաժեշտության դեպքում կտրամադրվեն փորձագետին:

5. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով սահմանված քրեական պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված փաստաթղթերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Վարչության պետի տեղակալ,
արդարադատության երրորդ
դասի խորհրդական՝ ***Ռ.Հ.Վարդանյան***